ՀՏԴ 331.5(479.25/243)

Տնտեսագիտություն

Անահիտ Մելքումյան,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԱՀ-ՈՒՄ

Աշխատության մեջ քննարկվում են ՀՀ և ԼՂՀ աշխատաշուկայի հիմնախնդիրները, ինչպես նաև դրանց լուծման ուղիները և հնարավորությունները : Վերլուծության հիման վրա մանրամասն առաջարկություններ են ներկայացվում հատկապես Լեռնային Ղարաբաղում զբաղվածության կարգավորման և տնտեսության զարգացման համար, որոնք ընդգրկում են հատկապես արդյունաբերության և ծառայությունների մի շարք ոլորտներ :

Բանալի բառեր՝ *Աշխատանքի շուկա, զբաղվածություն, տնտեսական աճ, ներդրումներ, ակտիվ քաղաքականություն*

Мелкумян А.С.
Доктор экономических наук, профессор
факультета управления АГЭУ

ПРОБЛЕМЫ ЗАНЯТОСТИ В РА И НКР

В научной работе рассматриваются проблемы рынка труда РА и НКР, а также пути и возможности их решения. На основе анализа предлагаются в частности, конкретные рекомендации по регулированию занятости и развитию экономики Нагорного Карабаха, которые охватывают ряд отраслей промышленности и сферы услуг.

Melkumyan A.S.
Ph.D, Professor
Department of Management,
State Economic University of Armenia

PROBLEMS OF EMPLOYMENT IN THE REPUBLIC OF ARMENIA AND NAGORNO-KARABAGH REPUBLIC

The problems of labour market of RA and NKR as well as solution ways and opportunities are discussed in the paper. Based on the analysis the detailed recommendations are elaborated particularly on employment regulation and economic development in Nagorno-Karabagh Republic which include a number of industry and services areas.

ՀՀ աշխատանքի շուկայի և զբաղվածության խնդիրները սերտորեն կապված են դեռևս 1990-ական թվականներին տնտեսության մեջ կատարված գործընթացների հետ: Հիմնական խնդիրները, որոնք խոչընդոտում են աշխատաշուկայի զարգացմանը ներառում են՝

- բարձր գործազրկությունը, ստվերային զբաղվածությունը և «ուղեղների արտահոսքը»;
- աշխատուժի ցածր գինը, եկամուտների անհավասարությունը և աղքատությունը;
- աշխատուժի առաջարկի որակական անհամապատասխանությունը արդիական տնտեսության պահանջներին;
- տնտեսության զարգացման կառուցվածքային և ռեգիոնալ անհամամասնությունները, այդ թվում գյուղական շրջաններում բնակչության թերզբաղվածությունը և ոչ գյուղատնտեսական զբաղվածության ցածր մակարդակը;

ՀՀ որոշ մարզերում (Լոռի, Տավուշ, Սյունիք) բնակչության և աշխատանքային ռեսուրսների ցածր վերարտադրության պայմաններում առկա է դեպոպուլյացիայի վտանգը:

ՀՀ-ում 1995-2016թթ. ընթացքում զբաղվածության մակարդակը շեշտակիորեն նվազել է (71 տոկոսից մինչև գրեթե 51 տոկոս), իսկ աշխատուժի մասնակցության աստիճանը՝ նվազելով գրեթե տասնչորս տոկոսային կետով, կազմել է 62 տոկոս: ՀՀ-ում, ինչպես և ԼՂՀ-ում գրանցված գործազուրկների առավելագույն մասը կանայք են, ինչը վկայում է աշխատատար

արտադրությունների, այդ թվում թեթև արդյունաբերության, ներառյալ տեքստիլ, տրիկոտաժի, մետաքսի և ագրովերամշակող արտադրությունների վերականգնման և զարգացման անհրաժեշտության մասին:

Զբաղվածության աճը և աղքատության կրճատումը նախ և առաջ պայմանավորված են տնտեսական աճով: Այսպես, 2005-2007թթ. երկնիշ տնտեսական աճը հանգեցրել էր նաև զբաղվածության և կենսամակարդակի աճին, ինչպես նաև միգրացիոն ներհոսքը գերազանցում էր արտահոսքը: Հետագայում, կապված համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետ, ՀՀ-ում գրանցվեց ՀՆԱ-ի կրճատում, իսկ հետագա տարիներին 3-7 տոկոսի սահմաններում տնտեսական աճը ուղեկցվում էր զբաղվածության նվազումով (Աղյուսակ 1): Սա վկայում է այն մասին, որ նշված ժամանակաշրջանում իրական ՀՆԱ-ի աճը ապահովվել է ոչ թե աշխատատար ճյուղերի, այլ առավել հումքատար արտադրությունների զարգացման, այդ թվում հանքահումքային արդյունաբերության, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի ու թանկարժեք մետաղների վերամշակման և դրանցից իրերի արտադրության ընդլայնման հաշվին:

Աղյուսակ 1

Զբաղվածության առաձգականությունը ՀՆԱ-ի նկատմամբ ՀՀ-ում 2005-2016թթ.

	Իրական ՀՆԱ-ի աճը (%)	Զբաղվածության աճը (%)	Զբաղվածության առաձգականությունը ՀՆԱ-ի նկատմամբ /բացարձակ արժեքը/
2005	14,5	1,5	0,1
2006	13,2	-0,5	0,0
2007	13,7	0,8	0,1
2008	6.9	1,5	0,2
2009	-14,1	-2,6	0,2
2010	2,2	2,8	1,3
2015	3,2	-5,4	1,7
2016	0,2	-6,2	31,0

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ-ի տվյալներ; հեղինակի հաշվարկներ:

*2009-2016թթ. զբաղվածության աճի և ՀՆԱ-ի նկատմամբ զբաղվածության առաձգականության ցուցանիշները տրված են ըստ ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացված տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունների արդյունքների:

ՀՀ-ում և ԼՂՀ-ում 2014թ. Սկսած կիրառվում է աշխատանքի շուկայի և զբաղվածության քաղաքականության նոր մոդել, որի շրջանակներում ավելի քան տասը ակտիվ ծրագրեր են ընդունվել և ներդրվել: Տարեկան 2-2,5 մլրդ դրամի չափով ֆինանսավորման պայմաններում 4-5 հազար գործազուրկներ և աշխատանք փնտրողներ են մասնակցում այդ ծրագրերին, աշխատանքի տեղավորվելով կամ վերապատրաստվելով:[1]

ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի (ՀՌԾ) համաձայն կարևորագույն գերակայություններից են հանդիսանում զբաղվածության ընդլայնումը և մարդկային կապիտալի զարգացումը:[2] Ընդ որում, զբաղվածության ընդլայնումը ենթադրում է որակյալ, բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծում: Նախատեսվում է ոչ գյուղատնտեսական հատվածում տնտեսական աճի յուրաքանչյուր մեկ տոկոսային կետն ապահովել 80 տոկոսի չափով՝ աշխատանքի արտադրողականության հաշվին, իսկ 20 տոկոսի չափով՝ զբաղվածության ընդլայնման հաշվին:

[1] www.employment.am
[2] www.gov.am

Ազգային աշխատաշուկայի առանձնահատկությունների հետ մեկտեղ կարելի է նշել այն ընդհանուր միտումները, որոնք բնորոշ են բոլոր զարգացած երկրներին։

1. Փոփոխվում է աշխատողների զբաղվածության կառուցվածքը, մասնավորապես ավելանում է զբաղվածությունը ծառայությունների ոլորտում և գիտատար ճյուղերում (տեղեկատվական համակարգեր, կապ, տիեզերագնացություն)։ Այսպես, 2014թ. ԱՄՆ-ում և Միացյալ Թագավորությունում գյուղատնտեսության մեջ զբաղված էր տնտեսության մեջ զբաղվածների համապատասխանաբար 1.3 և 1.1 տոկոսը, մինչդեռ ծառայությունների ոլորտում՝ 79-80 տոկոսը։
2. Բարձրանում է աշխատուժի կրթական և որակավորման մակարդակը։
3. Պետական աջակցության շնորհիվ աճում է փոքր և միջին բիզնեսի (ՓՄՁ) սոցիալ-տնտեսական դերը։ ԱՄՆ-ում փոքր բիզնեսին բաժին է հասնում ՀՆԱ-ի մինչև 50 տոկոսը, ինովացիաների կեսից ավելին, իսկ հարկային արտոնություններից և վարկավորման պետական ապահովագրությունից բացի փոքր բիզնեսը 300 մլրդ ԱՄՆ դոլարի չափով դոտացիաներ է ստանում պետական բյուջեից։ ՀՀ-ում 2014թ. ՓՄՁ-ում զբաղված էր երկրի տնտեսության մեջ զբաղվածների ավելի քան 40 տոկոսը։ Այդ ձեռնարկություններն ապահովում են ՀՀ ՀՆԱ-ի 42 տոկոսը, սակայն հարկային մուտքերի ընդամենը 27 տոկոսը և արտահանման 16 տոկոսը։ Անհրաժեշտ է ընդլայնել պետական աջակցությունը և դուրս բերել փոքր ձեռնարկությունների մի մասը ստվերային հատվածից։ Մինչև 2025թ. Նախատեսվում է ՓՄՁ-ի բաժինը ՀՆԱ-ում հասցնել մինչև 60 տոկոս:
4. Աշխատաշուկայի զարգացման գերակշռող միտումներից է հանդիսանում դրա ճկունության աստիճանի բարձրացումը, երբ իրականացվում է արտադրության դիվերսիֆիկացում և կիրառվում են զբաղվածության ոչ ստանդարտ ձևեր: Ներկայումս ԱՄՆ-ում կիրառվում են զբաղվածության նոր տեխնոլոգիաներ, այդ թվում « on-line gig economy » և « crowdsourcing »: « On-line gig economy”-ն՝ դա առցանց կարճաժամկետ պայմանագրերի կնքումն է անհատ աշխատողների և կազմակերպությունների, ձեռնարկությունների միջև, որը թույլ է տալիս գործատուին ընտրել լավագույն աշխատողներին, միաժամանակ կատարելով խնայողություններ, իսկ անհատ կատարողին՝ ընտրել հարմար աշխատանքային պայմանագիրը : 2014թ. 53մլն մարդ ընդգրկված էր այս համակարգում, աշխատելով ազատ գրաֆիկով (freelance) և ապահովելով 715 մլրդ. ԱՄՆ դոլարի եկամուտ մի շարք ոլորտներում, այդ թվում բիզնես և առաքման ծառայություններ, բժշկական և անձնական խնամք, տնային և վարորդական ծառայություններ։ « Crowdsourcing » –ի միջոցով անհատները և հանրահայտ ընկերություններն, այդ թվում Microsoft, Toyota և General Electric անհրաժեշտ գաղափարներ կամ ծառայություններ ստանալու նպատակով կիրառում են ինտերնետային ցանցի օգտատերերի առաջարկությունները :

Այսպիսով, ըստ փորձագիտական հաշվարկների « gig economy »-ի և « crowdsourcing »-ի հնարավորությունների օգտագործումը կնպաստի մինչև 2025թ. Գլոբալ ՀՆԱ-ի աճին 2.7 տրիլիոն ԱՄՆ դոլարի չափով, նախկինում տնտեսապես ոչ ակտիվ բնակչության զգալի մասնակցության շնորհիվ :

Հատկապես ուշագրավ են Իռլանդիայի հաջողությունները աշխատաշուկայի և տնտեսական զարգացման բնագավառում վերջին 20 տարիների ընթացքում։ Այդ հաջողություններին է նպաստել 1987-2015թթ. Ընթացքում զարգացման եռամյա ծրագրերի ընդունումը։[3] Այդ ծրագրերը հիմնականում ուղղված էին հարկային բարեփոխումներին (հատկապես եկամտահարկի կրճատմանը), սոցիալական ապահովության բարելավմանը, ինչպես նաև սոցիալական գործընկերության ամրապնդմանը գործատուների, արհմիությունների, գյուղացիական տնտեսությունների և կառավարության միջև համաձայնագրի կնքման միջոցով։ Նման քաղաքականությունը, զուգորդված վերամշակող արդյունաբերության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) աճով և կրթության ոլորտում վերջին երեսուն տարիների ընթացքում կատարված ներդրումներով, հանգեցրել է Իռլանդիայում աննախադեպ տնտեսական աճին, արտահանման ընդլայնմանը, զբաղվածության կտրուկ աճին հատկապես վերամշակող արդյունաբերության մեջ (տարեկան 3 տոկոսի չափով), ինչպես նաև զբաղվածության վերաբաշխմանը գյուղատնտեսությունից դեպի արդյունաբերության և ծառայությունների

[3] Ph. J. O'Connell "Astonishing success: Economic growth and the labour market in Ireland" – ILO, 1999.

ոլորտներ։ Վերամշակող արդյունաբերության մեջ ստեղծված աշխատատեղերի գրեթե կեսը ՕՌԻՆ-ի շնորհիվ էր։

Եվրամիության մինչև 2020թ. Մշակված զբաղվածության ռազմավարության (Europe 2020 strategy) շրջանակներում նախատեսվում են՝

- բարեփոխումներ աշխատաշուկայում, ուղղված դրա հատվածավորման հաղթահարմանը, համարժեք վարձատրության ձևավորմանը, ճգնաժամի պայմաններում աշխատատեղերը պահպանելու ընկերությունների ճկունության ամրապնդմանը, երիտասարդական զբաղվածության ապահովմանը ;
- աշխատատեղերի ստեղծում նախ և առաջ կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների, կանաչ տնտեսության և առողջապահության ոլորտներում, աշխատուժի պահանջարկի խթանման, ինքնազբաղվածության և բիզնես-ստարտափերի աջակցության, աշխատուժի հարկման և ստվերային զբաղվածության կրճատման միջոցով ;
- ներդրումներ մասնագիտական ունակությունների, կրթական և զբաղվածության համակարգերի միջև փոխազդեցության բարելավման, շարունակական կրթության համակարգի զարգացման նպատակով ;
- աշխատուժի ազատ տեղաշարժի իրավական և գործնական խոչընդոտների վերացում միասնական եվրոպական աշխատաշուկայի ձևավորման նպատակով ;

Ասիական երկրներում, այդ թվում Չինաստանում, Կորեայում, Մալայզիայում, Թաիլանդում և Վիետնամում արտահանմանն ուղղված տնտեսության աշխատատար ոլորտների զարգացումը նպաստել է այդ երկրներում աղքատության կրճատմանը։ Այսպես, Կորեայում զբաղվածության ազգային ռազմավարության շրջանակներում կառավարության կողմից ընտրված 100 խոշորագույն ընկերությունները նպաստում են աշխատատեղերի ստեղծմանը, ստանալով համապատասխան պարգևատրում։

ՀՀ-ում և ԼՂՀ-ում զբաղվածության կարգավորման նպատակով կարևորվում են հետևյալ առաջարկությունները՝

1. Հրատապ է արդյունաբերության մեջ աշխատատեղերի ստեղծման հիմնավորված ծրագրերի իրականացումն ըստ ընտրված ոլորտների և շրջանների։ Լեռնային Ղարաբաղում նպաստավոր են պայմանները սննդի, այդ թվում գինու, կոնյակի, մսի և մսամթերքների, պանրի, պահածոների և բազմազան հյութերի արտադրության, ինչպես նաև բարձրորակ կահույքի արտադրության ընդլայնման համար։ Այսպես, պանրի հզոր արտադրության կազմակերպման դեպքում կարելի է արտահանել մինչև 10 հազար տոննա պանիր, ինչպես նաև վաղահաս բանջարեղեն և պտուղներ։
2. Թթենու պլանտացիաների խնամքի կարգավորման և նոր պլանտացիաների ստեղծման շնորհիվ Լեռնային Ղարաբաղը կարող է դառնալ բուժիչ նշանակություն ունեցող բարձրորակ թթի օղու, սպիրտի, դոշաբի, չրի եզակի արտադրող։ Անհրաժեշտ է նաև ընդլայնել շերամապահության համար նախատեսված թթի պլանտացիաները, ինչը հնարավորություն կտա վերականգնել բնական մետաքսի արտադրությունը, որը կարևոր դեր կխաղա կանանց աշխատուժի օգտագործման տեսանկյունից։ Ի դեպ, թթի ծառը շատ քիչ խնամք է պահանջում, բայց ապրում է 300 տարի։
3. Ստեփանակերտում, Շուշիում և մյուս շրջկենտրոններում անհրաժեշտ է ստեղծել մեքենաշինական, գործիքաշինական և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկություններ, հաշվի առնելով նաև մտավոր ներուժի օգտագործումը։
4. Արցախում նաև պետք է զարգացնել այսպես կոչված կանաչ տնտեսությունը, այդ թվում ստեղծելով վերականգնվող էներգետիկայի ձեռնարկություններ, որոնք օգտագործում են արևի, քամու, գեոթերմալ տաք աղբյուրների էներգիան։ Կարևորվում է նաև կենցաղային թափոնների վերամշակման կազմակերպումը, ինչը կարող է նույնպես ապահովել լրացուցիչ էներգետիկ ռեսուրսներ։ Ըստ պրոֆեսոր Ս.Մելքումյանի հաշվարկների, ԼՂՀ միայն քաղաքային բոլոր բնակավայրերում առաջացող թափոնների ծավալը հասնում է տարեկան շուրջ 80 հազար տոննայի, որի վերամշակումն ու օգտագործումը տնտեսական առումով խիստ կարևոր է։[4]

[4] Ս.Մելքումյան <<Արցախ-Ղարաբաղ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն>>, Երևան, Յասոն ՍՊԸ, 2010թ.

5. Արցախում տնտեսության կոմպլեքսային զարգացման ուղղություններից է նաև զբոսաշրջության բոլոր տեսակների, այդ թվում էկոտուրիզմի զարգացումը : Այդ տեսանկյունից կարևորվում է ենթակառուցվածքների զարգացումը, այդ թվում ճանապարհային և հյուրանոցային ցանցի, բարձրակարգ ծառայությունների, տրանսպորտի : Համապատասխանաբար, անհրաժեշտ է այդ ոլորտի մասնագետների և սպասարկող անձնակազմի վերապատրաստում և ուսուցում :

6. Բնական և պատմական հուշարձաններով առավել հանրահայտ Մարտակերտի շրջանի զգալի մասերը, այդ թվում Թարթառ և Խաչեն գետերի հովիտները նպատակահարմար է դարձնել արգելավայր : Զբաաշրջության խթանմանը կնպաստի նաև Շուշին Շոշ գյուղի հետ կապող ճոպանուղու կառուցումը, ինչը նաև լրացուցիչ աշխատատեղեր կստեղծի : Անհրաժեշտ է նաև Լեռնային Ղարաբաղում թույլ չտալ քիմիական արդյունաբերության և ցեմենտի արտադրության ձեռնարկությունների կառուցում, որոնք կարող են աղտոտել բնական միջավայրը :